

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**3 ապրիլի 2019թ.  
ք. Երևան**

**N 29-Ա**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ  
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 151-Ա  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հրաչյա Կոլյայի Բասմաջյանին նշանակել թիվ 7 տարածքային ընտրական հանձնաժողովի անդամ:

2. Նախապատվության քվեակարգով քվեարկության արդյունքով ընտրված Վարդուհի Խաչիկի Վարպետյանին նշանակել թիվ 19 տարածքային ընտրական հանձնաժողովի անդամ:

3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Տարածքային ընտրական հանձնաժողովների անդամներ նշանակելու մասին» թիվ 151-Ա որոշման՝

- 1) 7-րդ կետը լրացնել «Բասմաջյան Հրաչյա Կոլյայի» բառերով,
- 2) 19-րդ կետը լրացնել «Վարպետյան Վարդուհի Խաչիկի» բառերով:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱԿ**

**Տ. Մ ու կ ու չյ ա ն**